ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Ենթադրվում է, որ յուրաքանչյուր արվեստ ու հետազոտություն և, նմանապես, յուրաքանչյուր արարք ու գործ հետամուտ են որևէ արդյունքի: Այդ իսկ պատճառով, արդյունքն արդարացիորեն հռչակում է մի բան, որին ձգտում են բոլորը: Արդյունքներում, սակայն, նկատվում են որոշակի տարբերություններ՝ մի դեպքում գործ ունենք արարքների հետ, մեկ այլ դեպքում՝ դրանցից առանձնացող արդյունքների հետ: Երբ արդյունքներն առանձնանում են արարքներից՝ նրանք, ըստ տրամաբանության, պետք է ավելի արժեքավոր լինեն, քան բուն գործողությունները:

Ուստի, եթե մեր արարքները հետամուտ են այնպիսի նպատակի, որին մենք ձգտում ենք որպես վերջնական արդյունքի (մնացյալ ամենին ձգտելով հանուն այդ նպատակի), այսինքն չենք ձգտում ամենին՝ հանուն մեկ այլ բանի (քանզի այդ դեպքում գործընթացը կձգտեր անվերջության, իսկ մեր ձգտումը կդառնար դատարկ ու անիմաստ), ապա ակնհայտորեն սա պետք է լինի արդյունքը և գլխավոր նպատակը: Ուրեմն, այդ նպատակի մասին մեր պատկերացումները մեծապես չե՞ն ազդի արդյոք մեր կյանքի վրա: Եվ մենք, թիրախ ունեցող նետաձիգի պես, արդյոք ավելի հաջողակ չե՞նք լինի նպատակակետին խփելու հարցում…

Եվ, եթե նույնիսկ նպատակը նույնն է հասարակ մահկանացուի և պետության համար, վերջինիս նպատակը, ամեն դեպքում թվում է ավելի մեծ ու ավելի համապարփակ՝ ինչպես դրան հասնելու, այնպես էլ այն պահպանելու առումով: **Եվ, թեպետ մեկ առանձին մարդու նպատակին հասնելն արժանավոր գործ է, այնուհանդերձ, ավելի հարգի և գովելի է պետության կամ համայնքի նպատակին ծառայելը:** Այս հարցերն էլ հանդիսանում են մեր հետազոտության առարկան քանզի, որոշակի իմաստով, դա էլ է քաղաքականություն:

Իմացությունն ու ամեն մի արարք հետամուտ են որոշակի նպատակի: Իսկ ինչի՞ն է հետամուտ քաղաքականությունը և ո՞րն է գործունեությամբ հասանելի արդյունքներից բարձրագույնը: Գոյություն ունի չգրված մի համընդհանուր կարծիք

(քանի որ, թե հասարակ ժողովուրդը, թե բարձրաստիճան խավերն այդ հարցում համակարծիք են), որ դա երջանկությունն է, որն էլ իր հերթին նույնացվում է լավ ապրելակերպի և լավ լինելու հետ: Սակայն նրանք տարակարծիք են երջանկության բովանդակության վերաբերյալ և շատերի պատկերացումները տարբերվում են իմաստունների գնահատականներից:

Ինչևէ, վերսկսենք մեր քննարկումն այնտեղից, ուր կանգ առանք: **Դատելով մարդկանց ապրելակերպից, շատերը, և հիմնականում ամենագռեհիկ կարգի մարդիկ, կյանքի նպատակը կամ երջանկությունը նույնացնում են (ոչ ամբողջովին հիմնազուրկ կերպով) հաճույքի հետ: Ըստ այդմ էլ, նրանք սիրում են վայելքներով լի կյանքը:** Կարելի է ասել, որ գոյություն ունեն **ապրելակերպի երեք հիմնական տեսակներ՝ վայելքասիրականը, քաղաքականը և երրորդը՝ կենսախոհականը**: Մարդկության զգալի մասն, իրենց ճաշակի առումով, ակնհայտորեն նվաստ են՝ գերադասելով գազաններին հատուկ կենսակերպը: Իրենց աշխարհայացքի արդարացման համար նրանք որոշակի հիմք են տեսնում այն բանում, որ **վերին խավերին պատկանողներից շատերը նույն այդ ճաշակին են:**

Հոչակավոր մարդկանց ապրելակերպի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բարձրաստիճան և ակտիվ կենսական դիրքորոշմամբ մարդիկ **երջանկությունը նույնացնում են փառքի հետ,** քանի որ դա է, վերջին հաշվով, քաղաքական կյանքի նպատակը: Սակայն դա չափազանց մակերեսային է թվում մեր փնտրածի համեմատ, քանի որ փառք ու պատիվն ավելի շատ կախված են իրենց վերաբերմունքն արտահայտող այլ մարդկանցից, քան թե այն անձից, ով ստանում է այդ շնորհը: Մինչդեռ արժանիքը, ըստ մեզ, պետք է հատուկ լինի անհատին և հեշտությամբ չօտարվի նրանից: Ավելին, մարդիկ, ըստ ամենայնի, հետամուտ են լինում փառքին, իրենց առաքինությունը հաստատելու համար: Առնվազն այն մարդիկ, ովքեր օժտված են կյանքի խոհեմությամբ, ձգտում են արժանանալ պատվի, ընդ որում արժանանալ դրան այն մարդկանց շրջանակում, ովքեր իրենց ճանաչում են և ջանում են հասնել այդ ամենին իրենց առաքինության շնորհիվ: Ըստ նրանց, սեփական առաքինությունը գերադասելի է մնացյալից: Հավանաբար, կարելի է նույնիսկ ենթադրել, որ քաղաքական կյանքում դա կարող է ավելի կարևոր նպատակ լինել, քան սոսկ

փառքը: Սակայն սա էլ է թվում թերի՝ առաքինությամբ օժտված լինելը, փաստորեն համեմատելի է քնած լինելուն, կամ ցմահ անգործությանը, կամ, ավելին, ծանրագույն տառապանքներ և դժբախտություններ կրելուն: Մինչդեռ նման կյանքով ապրած մարդուն ոչ ոք երջանիկ չի համարի, բացառությամբ ամեն գնով որևե գաղափար ապացուցելու նվիրյալների դեպքի: Այս հարցի արծարծումը կարելի է դադարեցնել, քանզի սույն քննարկումն իսկ արդեն բավարար չափով անդրադարձավ նրան: Երրորդը՝ դա կենսախոհական ապրելակերպն է, որը մենք կքննարկենք հետագայում:

Դրամ վաստակելու ապրելակերպը մարդուն բաժին է հասնում հարկադրաբար և հարստությունը, ակնհայտորեն, այն նպատակը չէ, որին մենք ձգտում ենք, քանի որ այն սոսկ միջոց է և ծառայում է որևէ այլ բանի համար: Հետևաբար, վերը նշված հասկացությունները, կարող են ավելի հավակնել նպատակ կոչվելուն, քանի որ դրանց հետամուտ են լինում հենց որպես այդպիսիք ձեռք բերելու համար: Մյուս կողմից, ակնհայտ է, որ դրանք էլ նպատակներ չեն, թեև շատ փաստարկներ են բերվել հակառակն ապացուցելու համար: Ուստի, ավարտենք այս հարցի շուրջ քննարկումը:

Հավանաբար գերադասելի կլիներ, կամ ավելի ճիշտ՝ պետք է մեր պարտքը լիներ, հանուն ճշմարտության մեզ համար թանկ բաները զոհաբերելը, հատկապես եթե մենք փիլիսոփաներ կամ իմաստասերներ ենք: Որքան էլ որ թանկ լինեն այդ բաները, **բարեպաշտությունը պահանջում է ընկերներից վեր դասել ճշմարտությունը**:

Կրկին վերադառնանք մեր կողմից հետամուտ լինող նպատակի խնդրին և հարցնենք, թե ի՞նչը կարող է դառնալ այդպիսին: Թվում է, պատասխանը կարող է տարբեր լինել տարբեր ասպարեզների և գիտությունների համար՝ այն տարբեր է բժշկությունում, ռազմարվեստում և նմանապես՝ այլուրեք: Արդ ո՞րն է նպատակը յուրաքանչյուրի համար: Անշուշտ այն է, հանուն ինչի արվում է մնացյալը: Բժշկությունում դա առողջությունն է, ռազմարվեստում՝ հաղթանակը, ճարտարապետությունում՝ շինությունը, այլ ասպարեզներում՝ այլք, սակայն բոլոր դեպքերում և գործողություններում դա վերջնական արդյունքն է, քանի որ հանուն դրա են բոլոր մարդիկ անում մնացած ամեն ինչը: **Ուստի, եթե մեր արարքները հետամուտ են**

որոշակի նպատակի, ապա դա այն արժեքն է, որին կարելի է հասնել գործողությամբ, իսկ եթե վերջիններս մեկից ավելին են, ապա նպատակներն էլ կլինեն մի քանիսը:

Այսպիսով խնդրի քննարկումը մեկ այլ ճանապարհով մեզ բերեց նույն կետին, սակայն փորձենք ներկայացնել եզրահանգումը առավել պարզորոշ կերպով: Քանի որ նպատակներն ակնհայտորեն մեկից ավելին են և մենք ընտրում ենք դրանցից մի մասը (օրինակ՝ հարստությունը, սրինգը, կամ ընդհանրապես՝ որևէ գործիք) որևէ այլ բանի հասնելու համար, ուստի, ակնհայտ է, որ ոչ բոլոր նպատակներն են վերջնական: Սակայն գերագույն նպատակը ակնհայտորեն վերջնական արդյունքն է: Ուստի, եթե վերջնական նպատակը մեկն է, ապա սա էլ հենց այն է, ինչ մենք փնտրում ենք, իսկ եթե առկա են մի քանի նպատակներ, ապա դրանց մեջ միակ ամենավերջնականը կլինի այն, ինչ փնտրում ենք: Այն, ինչը մենք ավելի ենք արժևորում, քան որևէ միջոց, որն անհրաժեշտ է այլ բանի հասնելու համար, անվանում ենք ավելի կարևոր նպատակ: Իսկ այն, ինչին հետամուտ ենք լինում որպես այդպիսին՝ առանց երբևէ այլ նպատակի ծառայեցնելու մտադրության, անվանում ենք վերջնական նպատակ:

Այդպիսի նպատակ, նախ և առաջ, համարվում է երջանկությունը, քանզի այն մենք ընտրում ենք ինքնին որպես այդպիսին, այլ ոչ թե իբրև միջոց մեկ ուրիշ բանի համար: Սակայն փառքի, հաճույքի, ողջամտության և ցանկացած այլ առաքինության ընտրություն մենք կատարում ենք ինքնին այդ արժեքների համար (քանի որ, եթե դրանք արդյունք էլ չտան, մենք միևնույն է կընտրենք հենց դրանք): Միևնույն ժամանակ, մենք այդ ընտրությունը կատարում ենք հանուն երջանկության, մտածելով, որ դրանց միջոցով մենք կհասնենք երջանկության: Մյուս կողմից, երջանկությունը ոչ ոք չի ընտրում հանուն վերը նշված արժեքների, ոչ էլ հանուն որևէ այլ բանի: Այն ինքնանպատակ է:

Ուստի երջանկությունը վերջնական և ինքնաբավ արժեք է և գործունեության ավարտն է:

Ինչևէ, երջանկությունը գերագույն նպատակ է, ասելը, հավանաբար կընկալվեր որպես տափակություն և կարիք կզգացվեր դրա բովանդակության ավելի ըմբռնելի պարզաբանման: Դա հնարավոր կլիներ անել, եթե մենք կարողանայինք նախ որոշել մարդու գոյության իմաստն աշխարհում: Ճիշտ այնպես, ինչպես սրնգահարի, քանդակագործի կամ դերասանի և, ընհանրապես, գործառույթ կամ գործունեություն կատարող ամեն ինչի դեպքում արժանիքն ու ՝լավը՝ համարվում են իրենց իսկ գործառույթում ամփոփված, նույնն էլ վերաբերում է ընդհանրապես մարդ էակին, եթե նա որոշակի գործառույթ ունի: Հնարավո՞ր է արդյոք, որ հյուսնը և կոշկակարը որոշակի գործառույթներ ունենան կամ գործունեություն իրականացնեն, իսկ մարդու գոյությունը իմաստազուրկ լինի: Հնարավո՞ր է, որ նա ծնված լինի առանց նշանակության: Եվ ինչպես աչքը, ձեռքը, ոտքը և, ընհանրապես, մարմի ամեն մաս որոշակի գործառույթ ունի, հնարավո՞ր է պնդել, որ մարդն այս ամենից զատ ունի առանձին նշանակություն: Այդ դեպքում ինչու՞մ կարող է այն կայանալ: Կյանքի երևույթը ընդհանրական է թվում անգամ բույսերի համար, բայց մենք ձգտում ենք մարդ էակի առանձնահատկության ըմբռնմանը: Ուստի, եկեք բացառենք կյանքի ուսումնասիրությունը սնուցման և աճի տեսանկյուններից: Հաջորդը կլինի զգայական կյանքը, սակայն դա ընհանուր երևույթ է թվում անգամ ձիու, ցուլի և ընդհանրապես բոլոր կենդանիների համար: Այսպիսով, մնում է **բանական մտածողություն ունեցող էակի ակտիվ կյանքը,** որի մի մասը ղեկավարվում է մտածողությանբ, իսկ մյուս մասը ինքնին էակն է, որը մտածում է: Եվ քանի որ ՝բանական էակի կյանքը՝ նույնպես երկու իմաստ ունի, մենք պետք է կյանքը դիտարկենք գործունեության մասով, ինչն ավելի է համապատասխանում բուն իմաստին: Հիմա, եթե մարդու նշանակությունը հոգևոր գործունեությունն է, որը բանականության հետևանքը կամ արդյունքն է, և եթե մենք ասում ենք, որ մարդու նշանակությունը համազոր է բարեկիրթ, լավ մարդու նշամակությանը, ինչը նույնն է քնարահարի և արհեստավարժ քնարահարի դեպքում, նույնը կարող ենք ասել առանց բացառության բոլոր այլ դեպքերի համար, իսկ առաքինության առավելությունները պարզապես լրացումներ են գործառույթներին: Եվ եթե այդպես է, մենք մարդու գործունեությունն ու նշանակությունը կարող ենք համարել կյանքի որոշակի ձև, իսկ կյանքն իր հերթին՝ համարել հոգևոր գործունեություն և բանականությամբ թելադրված գործողություններ: Բարեկիրթ մարդու խնդիրն է լինել

այդ ամենի վեհանձն իրագործողը, իսկ ցանկացած գործողություն լավ է կատարված, երբ այն իրագործված է համապատասխան կատարելությամբ: Եթե ամեն ինչ այսպես է, մարդկային բարիքը հավակնում է դառնալ առաքինության հետ ներդաշնակ հոգևոր գործունեություն: Իսկ եթե առաքինությունները մի քանիսն են, ապա ներդաշնակությունը ձեռք է բերվում լավագույնին և առավել համապարփակին համապատասխան:

Դրան ավելացնենք ՝ամբողջ կյանքում՞ արտահայտությունը, քանի որ ինչպես մեկ ծիծեռնակով գարուն չի գա, այնպես էլ մեկ օրը, կամ կարճ ժամանակահատվածը մարդուն երանելի և երջանիկ չեն դարձնի:

Մեր դատողությունները համահունչ են նրանց ասածի հետ, ովքեր երջանկությունը նույնացնում են առաքինության հետ, քանզի առաքինությունից է բխում առաքինի գործունեությունը: Սակայն մեծ տարբերություն կա, այն հարցում, թե մենք գերագույն բարիքը պարզապես կընկալենք, թե նաև կգործադրենք, մտքում կպահենք այն, թե կօգտագործենք մեր արարքներում: Մտքում պահելը կարող է որևէ դրական արդյունք չտալ, ինչպես որ քնած, կամ այլ կերպ անգործ վիճակում գտնվող մարդու պարագայում, ինչը սակայն նույնը չէ գործունեություն իրականացնելու դեպքում, քանզի ով եռանդուն է, անհրաժեշտությունից դրդված կգործի և լավ կգործի: Ինչպես օլիմպիական խաղերում ամենագեղեցիկներն ու ամենաուժեղները չեն, որ դափնիներ են վաստակում, այլ նրանք, ովքեր մրցում են (քանզի հաղթողները նրանց միջից են), նույն կերպ էլ նրանք, ովքեր գործում են, նվաճում են, և արդարացիորեն են նվաճում, բարի և լավ բաները կյանքում:

Ասվածին ավելացնենք նաև, որ մարդը չի կարող անգամ առաքինի համարվել, եթե վայելք չի ապրում լավ արարքներից, քանզի ոչ ոք մարդուն արդար չի անվանի, եթե նա վայելք չի տեսնում արդար գործերի մեջ, ոչ էլ ազատամիտ կանվանեն մարդուն, ով չի վայելում ազատ գործունեությունը, և նույնն ամեն ասպարեզում է: Եթե այդպես է, ապա առաքինի արարքները պետք լինեն ինքնին հաճելի: Նրանք միաժամանակ վեհ են ու բարի, և այս հատկանիշները պարունակում են մեծագույն

չափով, քանզի առաքինի մարդը ճիշտ է դատում այդ հատկանիշների մասին: Նրա մտածողությունն այնպիսին է, ինչպիսին մենք վերը ներկայացրել ենք:

Այսպիսով, երջանկությունը լավագույն, ազնվագույն և ամենահաճելի բանն է աշխարհում, և այս հատկանիշները չեն առանձնացվում, ինչպես դելոսյան գրություններում.

Ազնվագույնն այն է, ինչ ամենաարդարն է,
Եվ լավագույնն է առողջությունը,
Սակայն հաճելին մեր սրտի ուզածին հասնելն է:

Բոլոր այս հատկությունները վերաբերում են լավագույն արարքներին և սրանք, կամ սրանցից լավագույնները, մենք նույնացնում ենք երջանկության հետ: Այնուհանդերձ, ինչպես նշել ենք, երջանկության համար ակնհայտորեն անհրաժեշտ են նաև նյութական բարիքներ, քանզի անհնարին կամ ոչ դյուրին է վեհանձն արարք կատարելը առանց պատշաճ նյութական ապահովվածության: Շատ գործողություններում, մենք որպես լծակներ օգտագործում ենք ընկերներին, հարստությունը և քաղաքական իշխանությունը… Ինչպես նշել ենք, երջանկության համար անհրաժեշտ են նաև նման բարեկեցիկ պայմաններ, այդ պատճառով ոմանք երջանկությունը նույնացնում են հաջողության, իսկ ոմանք էլ՝ առաքինության հետ:

Այս պատճառով հարց է ծագում՝ երջանկությունը ձեռք է բերվում արդյոք ուսանելո՞վ, հմտանալո՞վ կամ այլ վարժանքներո՞վ, թե՞ աստվածային նախախնամության արդյունքում, կամ գուցե պատահականության արդյունքում: Եվ եթե մարդկանց համար գոյություն ունի որևէ աստվածատուր ընծա, ապա խելամիտ կլինի երջանկությունը համարել այսպիսին և, ամենայն հավանականությամբ, ամենամեծ աստվածաշնորհը մարդուն:

Բայց այս հարցը, հավանաբար, առանձին հետազոտության առարկա է: Երջանկությունը, այնուհանդերձ, եթե անգամ աստվածաշնորհ չէ, այլ առաքինության, ուսուցման կամ այլ վարժանքների արդյունք է, պետք է դասվի

ամենաաստվածահաճո բաների շարքում, քանզի առաքինության արդյունքը պետք է աշխարհի լավագույն բանը լինի, ինչպես և երանելի մի բան:

Միաժամանակ, երջանկությունը մի ինչ-որ ընդհանուր բան է շատերի համար՝ բոլոր նրանց համար, ովքեր չեն կորցրել առաքինության հասնելու հնարավորությունը և կարող են դրան հասնել որոշակի ուսուցման և ջանադրության միջոցով: Սակայն եթե գերադասելի է երջանիկ լինել այս կերպ, քան պատահականության շնորհիվ, ապա կարելի է ընդունել, որ սա է ճշմարտությունը, քանի որ այն ամենը, ինչ կախված է բնական գործոնից, բնականոն կերպով լավագույնն է և, այն ամենը, ինչ կախված է գիտությունից կամ ցանակացած այլ բանական գործոնից և, հատկապես, եթե այն կախված է բոլոր պատճառներից լավագույնից: Հետևաբար, մեծագույն սխալ կլիներ պատահականությանը վստահել վսեմագույնն ու ազնվագույնը:

Այս հարցի պատասխանը ակնհայտ է նաև երջանկության սահմանումից, քանզի այն բնորոշվեց որպես հոգևոր առաքինի գործունեության որոշակի տեսակ: Ինչ վերաբերում է մնացած բարիքներին, դրանց մի մասը երջանկության անհրաժեշտ պայման են, իսկ մյուսներն էլ աջակից ու օգտակար են իրենց բնույթով: Ասվածը համահունչ է վերը շարադրվածին, ուր մենք քաղաքականության արդյունքը բնորոշեցինք որպես լավագույն արդյունք: Եվ քաղաքականությունն է, որ իր հնարավորությունների զգալի մասով կողմնորոշում է քաղաքացիներին որոշակի ուղղությամբ, այն է՝ բարի լինել և վեհանձն արարքների ընդունակ: